

**ՄՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՀՈՒՆԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԻ  
ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ ԳԻՏԵԼԻՔԻ ԵՎ ԴՊՐՈՒԹՅԱՆ ՕՐԿԱ  
ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ**

01.09.2019



**Միրելի՛ աշակերտներ, ուսանողներ, ծնողներ, մանկավարժներ ու դասախոսներ**

Ընդունե՛ք ջերմ շնորհավորանքներս նոր ուսումնական տարվա մեկնարկի կապակցությամբ:

Ուսուցիչների համար Մեպտեմբերի 1-

ի տոնն իրենց սաների առջև գիտելիքների մեծ պաշարը կրկին բացելու պահն է, իսկ սովորողների համար՝ ընկերների հետ հանդիպման, նոր շփումների, բացահայտումների, ձեռքբերումների փուլի սկիզբը:

Բոլորիդ հաջող ու խոստումնալից ուսումնական տարի եմ մաղթում՝ լի նոր հմտություններով, գաղափարներով, ձեռնարկներով, մանկավարժներին՝ մասնագիտական հաջողություններ, պատասխանատվություն եւ համբերատարություն, աշակերտներին՝ մեծ աշխատասիրություն, հաստատակամություն, գերազանց գնահատականներ ու ստեղծագործ միտք:

Համոզված եմ՝ մեր նպատակալաց աշակերտները եւ ուսանողներն իրենց բանիմաց դասավանդողների օգնությամբ կարող են հաղթահարել բոլոր դժվարությունները, դառնալ իսկապես կրթված մարդիկ ու նպաստել Սյունիքի մարզի ու մեր հանրապետության զարգացմանը:

Շնորհավորում եմ հատկապես այս օրվան անհամբերությամբ սպասած առաջին դասարանցիներին, որոնք երկար ճամփորդություն ունեն անցնելու գիտելիքների աշխարհում, եւ բոլորս պետք է օգնենք նրանց սիրել դպրոցն ու ուսումը:

Կրթությունն ու գիտությունը, նույնիսկ դժվարին ժամանակաշրջաններում, եղել եւ մնում են մեր պետության գերակա առաջնահերթություններից մեկը, ու մենք ձգտում ենք եւ շարունակելու ենք ստեղծել առավել բարենպաստ ու ապահով պայմաններ բոլորիդ՝ եւ՛ սովորողների, եւ՛ սովորեցնողների համար՝ ակնկալելով այդ ամենին համահունչ առաջընթաց:

Բարի՛ երթ բոլորիդ՝ նոր՝ 2019-2020 ուսումնական տարում: